պաշտպանի թիւրքերի արշաւից և որ, պարտութեան դէպքում, բոլշևիկները պէտք է այրեն հանքերն ու հեռանան*)։

Բաքւի Ազգ. Խորհրդի հիմնական նպատակներից մէկն էլ հայ-թրքական յարաբերութիւնների բարւոքումն էր։ Ճակատից փախչող ռուս զօրամասերի ու ռուս գաղթականների վրա գործած յարձակումներին զուգընթաց՝ թուրքերը ասպատակում ու աւերում էին և հայկական շրջանները, թալանում, կոտորում ու գերում հայերին։ Դեկտեմբերին աւերի ու աւարի մատնեցին մի շարք հայաբնակ գիւղեր Նուխիի ու Շամախիի գաւառներում։ Յունւ. 2-ին սպանեցին Գանձակի թրքական մասից անցնող 14 հայեր։ Ընդհարումներ տեղի ունեցան և ուրիշ վայրերում։ Շատ շրջաններում ճանապարհները փակեցին, և հայերը զրկուեցին շարժուելու հնարաւորութիւնից։ Օդը օրէցօր ելեկտրականանում էր։

Ազգ. Խորհուրդը, մի շարք խորհրդակցութիւններից յետոյ, որոշեց բանակցութիւնների մէջ մտնել Մահմետական Ազգ. Խորհրդի հետ։ Այդ նպատակով ընտրեց 6 հոգինոց յանձնախումբ — Յ. Քաջազնունի, Ա. Զիլինգարեան, Հ. Տէր-Միքայէլեան, Ս. Տէր-Ղազարեան, Լ. Աթաբէգեան և Տ. Իսախանեան — և յանձնարարեց սկսել բանակցութիւնները։

Յունւ. 15-ին գումարուեց Հայ և Մահմ. Ազգ. Խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցական առաջին նիստը։ Թուրքերի կողմից մասնակցում էին Մահմ. Ազգ. Խորհրդի նախագահ Ալի Մարդան բէգ Թոփչիբաշևը, Մահմետ Հասան Գաջինսկին, Բեհբութ խան Ջիւանշիրը, Իբրահիմ բէգ Հայդարովը, Ա.Ի.Վեզիրովը և Բ.Ա.Բաբայեւը։ Մի շարք նիստերում քննութեան առնուեցին հետևեալ խնդիրները. ընդհանուր՝ 1) Վերաբերում դէպի ռուս կառավարութիւնը, 2) Անդրկովկասի ապագայ քաղաքական կազմը, 3) Ռազմաճակատի հարցը և պատերազմը վերջացնելու միջոցները, 4) Կովկասի վարչական բաժանումը։ Տեղական՝ 1) Բաքւի իշխանութեան կազմակերպումը, 2) Երկաթուղու և միւս ճանապարհների բացումը, 3) Գաւառների անիշխանութիւնը։ Եւ այլն։

---

*) Առաջ բերենք այստեղ այդ ուշագրաւ գրութեան էական մասերը։ Նամակը գրած է Յարիցինից, օգ.8-ին և ուղղած է Շահումեանին։ Ստալինը գրում էր. «... Մեր ընդհանուր քաղաքականութիւնը Անդրկովկասի խնդրում այն է, որ ստիպենք գերմանացիներին պաշտօնապէս ճանաչել, որ վրացական, հայկական և ազրբէջանեան հարցերը Ռուսաստանի համար ներքին հարցեր են, որոնց լուծմանը գերմանացիները չպէտք է մասնակցեն։ Հէնց այդ պատճառով մենք չենք ճանաչում Վրաստանի անկախութիւնը, որ ճանաչած է գերմանացիների կողմից։

2. Հնարաւոր է, որ մենք ստիպենք զիջելու գերմանացիներին Վրաստանի հարցում, բայց այդ զիջումը կանենք միայն ա՛յն պայմանով, որ Գերմանիան չխառնուի Հայաստանի և Ազրբէջանի գործերին։

4. Ձեր յաջողութիւնները ուրախացնում են մեզ, բայց մենք կը կամենայինք, որ, գերմանացիների հետ բարդութիւններ ունենալուց խուսափելու համար, դուք Գանձակից աւելի հեռու չգնաք, այսինքն՝ չմտնէք Վրաստանի սահմանները, որի անկախութիւնը պաշտօնապէս ճանաչած է Գերմանիայի կողմից»։

Եւ աւելի այժ տալու համար իր խօսքերին, Ստալինը աւելացնում է. «Այս ամբողջ սուածը ընդունեցէք ո՛չ իբրև իմ անձնական կարծիք, այլ որպէս առաջարկ Լենինից, որի հետ երէկ խօսեցի ուղիղ հեռադրաթելով բոլոր չօշափուած հարցերի մասին։ (С. Шаумян, «Статьи и речи», 1924, Баку, стр. 224—5)։